

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԳ՝ ԵՐԿՐԻՂ ԳԵՍ**

# ԿԱՐՈՂ ԵՍ՝ ԳԼՈՒԽԻՆԻՂ ԴԱՆՏԻՐ

Մեր հարցազրույցը Մ գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ, աշխ. գիտ. թեկնածու Լիլիթ Մահակյանի հետ է:

- Լիլիթ, ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում, դիմելով իրենց սոցիալական վիճակից դժգոհող գիտնականներին, ՀՀ վարչապետը հայտարարեց, թե անցել են այն օրերը, երբ Ակադեմիան խնդիրներ էր առաջադրում, ժամանակն է առաջարկել դրանց լուծումները: Դուք կհստի՞մ եք այդ տեսակը:

- Ես կհստիմ եմ այն տեսակետը, որ իրոք խնդիրները լուծելու ժամանակը եկել է ու ոչ թե այսօր, այլ արդեն վաղուց: Բայց հարցն այն է, որ ԳԱԱ առաջադրած խնդիրները բավականին թանկ են, այսինքն՝ լուծման համար լուրջ գումարներ, քանի որ, այնտեղ էլ ասվեց, Ֆունդամենտալ հետազոտություններ են անում: Բայց ինչ-որ տեղ լուրջ է համաձայնեմ, որ ամեն ինչը չէ, որ Ֆինանսներով է լինում ու, իրոք, ես համաձայն եմ վարչապետի այն մտքին, որ մենք շատ վատ ենք փաթեթավորում մեր հետազոտությունները: Մենք ունենք շատ լուրջ գիտնականներ, ունենք լուրջ ձեռքբերումներ ԳԱԱ համակարգում, բայց փաթեթավորման հարցը, իրոք, դժվար է: Սակայն, ինչպես ամեն ինչ այս կյանքում, դա ես հենց այնպես չի կարող լինել: Այսինքն՝ եթե մարդը 50-60 տարի (իսկ լուրջ գիտնական դառնալու համար երկար տարիներ են լինում) ուրիշ հասարակարգում է ապրել, գործել եւ ուրիշ կերպ է փաթեթավորել իր հետազոտությունը, հիմա հանկարծ այս հասարակարգում նա միանգամից չի կարող այնպես փաթեթավորել, ինչպես վարչապետն է մտածում: Այսինքն՝ դրա համար էլ լուրջ լծակներ ու գործողություններ են լինում: Գիտնականը չի կարող միեւնույն ժա-

մանակ լինել եւ գիտնական, եւ քիզնեսմեն:

- Դուք Ձեր ելույթում իշխանություններին կոչ էիք անում ազնիվ լինել ու եթե համարում եմ, որ գիտության մեջ մնալու համար երիտասարդներին լուրջ չէ խթանել, առաջ անկեղծորեն ասեմ այդ մասին: Վարչապետի խոսքը, որ Ձեր խոսքից հետո էր, ինչպե՞ս ընդունեցիք, արդյո՞ք այն հենց դա է նշանակում էր, որ երիտասարդ գիտնականն այնքան էլ լուրջ չէ:

- Չէ, ես հասկացա, որ լուրջ է: Միշտ էլ գիտեի, ուղղակի ասում էի՝ արդյո՞ք երիտասարդի համար ստիճակներ կան գիտության մեջ աշխատելու: Բարոյական ու ֆինանսական ստիճակները ասացի, որ չկան, ու չեմ կարծում, թե նորություն են ասել, ուղղակի ասել են այնպիսի բաներ, որոնք շատ-շատերը գիտեն, բայց չեն ասում: Ու ինձ շատ դուր եկավ եւ վարչապետի եւ մնացած մասնակիցների ռեակցիան այդ ամեն ինչին: Այսինքն՝ իմ խոսքերը չժխտվեցին: Ես դրանից կարող եմ հասկանալ, որ հիմնականում ճիշտ եմ ասել: Ավելին, ես իհարկե չեմ լսել, բայց կոլեգաներս այսօր լուրջաբանեցին, որ երեկ ՀՀ նախագահն է առնչվել գիտության հարցերին ու հատկապես առաջ է քաշել այն խնդիրները, որոնք ես հնչեցրել էի՝ երիտասարդների, մասնավորապես, բնակարանային, սոցիալական հարցեր: Ու շատ ուրախ եմ, ինձ համար դա արդեն նշանակում է, որ գործընթացը սկսվել է: Այսինքն՝ եթե մինչեւ այդ ընդհանրապես չէին էլ խոսում, կարծես մենք գոյություն չունեինք, այսօր արդեն խոսվում է: Հասկացան, որ իրոք լուրջ ուժ կա հենց կոնկրետ ԳԱԱ-ում, լուրջ լուրջ տեղեկալ՝ կա երիտասարդների, որն իր թվաքանակով սկսում է ուղղակի անլուրջ տղավորություն թողնել, որովհետեւ գնում են գիտությունից:

- Ասացի՞ք՝ շատերը գիտեն Ձեր ասածների մասին, բայց չեն խոսում: Կարծում եք՝ ի՞նչն է դրա

դատմանը:

- Չգիտեմ: Չեմ կարող չիմանալ, որովհետեւ դա մեր կյանքն է: Գուցե հնարավորություն չի տրվել խոսելու, թե մինչեւ հիմա էլ մույն լուրջները եղել են... Հույս ունենք, որ ինչ-որ դրական տեղաշարժ լինելու է, որովհետեւ այլեւս հնարավոր չէ: Սրանից վատ ուղղակի չի կարող լինել:

- Իսկ լուրջության նմանօրինակ վերաբերմունքի դարազայում դեռի՞ ո՞ր է գնում մեր գիտությունը:

- Գիտությունը թանկ հաճույք է, իմ կարծիքով, ոչ միայն բուն գիտական հետազոտությունների, այլեւ ցանկացած լուրջության համար: Խոսքս միջազգային մակարդակի գիտության մասին է, որը ունենալու, ստեղծելու ու եղած մեծ ներուժը լուրջաբանելու միայն կարող ենք ունենալ լուրջ, բոլորի կողմից ակնկալվող լավ փաթեթավորված գիտություն, որը կարող ենք վաճառել: Իսկ վերջինիս համար անհրաժեշտ է նախ ցանկություն (արդյոք մեր լուրջությանը ու մեզ լուրջ է գիտություն), հետո լուրջ զարգացման ռազմավարություն, հստակ գործողությունների ծրագիր, կոնկրետ մեխանիզմներ, հստակ ընտրված առաջնություններ եւ ամենակարեւորը՝ լուրջաբանական հոգածություն: Ինչ լուրջություն որ ունենանք, կունենանք նաեւ այդպիսի գիտություն:

- Ծանոթներիցս մեկը վարչապետի մոտեցման վերաբերյալ մի այսպիսի համեմատություն էր արել, թե դա նման է այն բանին, որ հավին կուտ չտաս եւ նրանից դահանջես նախ ծու ածել, որդեսզի այն վաճառես ու կուտ առնես...

- Ես արդեն 10 տարի է, ինչ գիտության մեջ աշխատում եմ, ինձ անընդհատ լուրջությունն ասում է՝ հասկացիր, փող չունեմ, կարո՞ղ ես՝ գլուխդ դառնիր: Մեր էկոլոգանոսֆերան ունի միջազգային մակարդակի լաբորատորիա, ԳԱԱ շատ ինստիտուտների համեմատությամբ մենք հարուստ ենք, մենք ունենք երիտասարդ կադրեր, մեզ աշխար-



հում ճանաչում են, մեր երիտասարդներից շատ-շատերը տարին միմիմում 1-2 անգամ մասնակցում են միջազգային կոնֆերանսների, բայց դա այն լուրջության հաշվին, ուր նրանք գնում են: Մենք գրատներ ենք շահում: Այսինքն՝ լուրջություն շատ փող ենք բերում: Բայց, մեկ է, այսօր իմ կյանքը էլ լավ չէ: Ինչպե՞ս 10 տարի առաջ ես եւ իմ կոլեգաները մեր վաստակած փողով չէինք կարող մեզ դառնել, այնպես էլ հիմա: Ես եթե մույնիսկ դու կարողանում ես ինչ-որ ծեղով միջազգային փողեր բերել Հայաստան, մեկ է՝ էլի առաջադի նկատմամբ լավատես վստահություն չունես: Ես չեմ կարող ո՛չ իմ լուրջությանը, ո՛չ որեւիցե բանկի ասել՝ ազնիվ խոսք, ես այսօր գրանտ ունեմ, մյուս տարի էլ կունենամ, ինձ հիփոթեք տվեք, որովհետեւ դա լուրջ չէ, որովհետեւ այսօր այդ գրանտը կա, վաղը չկա:

- Լիլիթ, եթե գրանտները չստանաք, Դուք ինքներդ կմտածե՞ք ՀՀ-ից հեռանալու մասին:

- Ստիճակ էմ լինելու: Իմ կոլեգաներից էլ շատ-շատերը գնացել են, այսօր արտասահմանում մեծ բաների են հասել ու աղախով են ապրում: Չեմ կարող ասել՝ հարուստ, որովհետեւ գիտության մեջ հարուստ չես կարող ապրել: Չենք էլ ձգտում: Նրանք գալիս են այստեղ՝ կարոտից խեղդված, բայց շատ շուտով թողնում, գնում են, որովհետեւ հասկանում են, որ ոչ մի բան չի փոխվել: Խնդիրը դա է: